Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

Շաբաթական Զեկույց
7 հունվար 2013

Հասկանալ ֆինանսական շուկաները, տեղեկատվությունը և վերլուծությունները գիտակցված ներդրումների նպատակով

Ձեզ են ներկայացնում TeleTRADE Հայաստանի շաբաթական զեկույցների երկրորդ հատորի առաջին հրապարակումը՝ առաջարկելով միջազգային շուկայական միտումների և ֆինանսատնտեսական զարգացումների բազմակողմանի վերլուծություն՝ կենտրոնանալով Հայաստանի վրա, սակայն անդրադառնալով նաև համաշխարհային շուկայական միտումներին և զարգացումներին ԱՄՆ-ում,Եվրոպայում և Ասիայում:.

Ձեր ուշադրությանը ներկայացնում ենք՝

- Ներդրողների վստահությունը վերականգնվեց այն բանից հետո, երբ Կոնգրեսը վերջին րոպեին եկավ պայմանավորվածության այսպես կոչված «բյուջետային անդունդը» չեզոքացնելու նպատակով, սակայն ներդրողների երկարաժամկետ վստահությունը խաթարված է աճող դեֆիցիտի պատճառով: ԱՄՆ-ի տնտեսության հեռանկարը, սակայն, խթանվեց գործազրկության նոր աշխատատեղերի ստեղծման և տների շուկայում դրական միտումների վերջին զեկույցների շնորհիվ:

- Ի հեճուկս ԱՄՆ-ի բյուջետային պայմանավորվածությանը՝ եվրոպական արժեթղթերը նվազում էին, թեպետը եվրոպական տնտեսության հեռանկարը բարելավվեց այն բանից հետո, երբ գերմանական տնտեսությունը բարելավվեց և բարելավված սպառողական հարցումները աճ մատնանշեցին եվրոզոնայի տնտեսությունների համար:

- Անցած շաբաթ Ասիայում ճապոնական շուկան շատ սակավ հաղթողների թվում էր, քանզի ճապոնական Nikkei stock index-ը գրանցեց իր բարձրագույն փակման մակարդակը երկու տարիների ընթացքում: Չինաստանի վերաբերյալ կանխետսումները բարելավվեցին, քանզի սպասվում է, որ երկրի չորրորդ քառորդի ՀՆԱ-ն կաճի՝ ավարտելով յոթ_քառորդանի անկումը: Սպառողների վստահությունը ավելի ամրապնդվեց, ինչը արտահայտվեց Հոնկկոնգում շքեղության ապրանքների վաճառնքերի բարելավմամբ, և և Չինաստանը առաջ անցավ ԱՄՆ-ից որպես շքեղության ապրանքների աշխարհի խոշորագույն գնորդ:

- Ապրանքային շուկայում ոսկու գները անկում ապրեցին, թեպետ ներդրողները ոգևորվեցին տարեկան աճով և այժմ տիրապետում են ոսկու ռեկորդային քանակին՝ 60 տոկոսով ավել ոսկի ձեռք բերելով,քան 2011թ.: Վերլուծաբանները կանխատեսում են, որ 2013թ. ոսկու գները կհասնեն մինչև 2000 դոլարի,թեպետ պահանջարկը կարող է դանդաղել, քանզի Հնդկաստանը՝ ոսկու խոշորագույն գնորդը, կարող է ոսկյա ապրանքների ներմուծումների վրա նոր հարկ մտցնել:

Ամերիկյան ներդրողները համոզվեցին բյուջետային պայմանավորվածության շնորհիվ, սակայն պարտքի հետ կապված մտահոգությունը պահպանվում է:

Ներդրողների վստահությունը վերականգնվեց այն բանից հետո, երբ Կոնգրեսը վերջին րոպեին եկավ պայմանավորվածության այսպես կոչված «բյուջետային անդունդը» չեզոքացնելու նպատակով, ինչը իրենից 2013թ. հունվարի 1-ին գործարկվող վերջնաժամկետ էր համարվում , երբ ավտոմատ կերպով տեղի կունենար 600 միլիարդ դոլարի ծախսերի կրճատում և հարկերի ավելացում: Այս համաձայնությունը հատկապես կարևոր էր, քանզի շատ տնտեսագետներ վախենում էին, որ վերոնշյալ ավտոմատ միջոցառումները կարող էին ամերիկյան նոր ճգնաժամի պատճառ հանդիսանալ 2013թ. առաջին կեսում: Պայմանավորվածությունը, սակայն, չկարողացավ հասնել ներդրողների երկարաժամկետ վստահության, քանզի այն չանդրադարձավ երկրի մեծացող դեֆիցիտին, ինչպես նաև պարտքի աճող ծավալներին, որը անցած շաբաթ պաշտոնապես հասավ 16,4 տրիլիոն դոլարի: Թեպետ ԱՄՆ-ի գանձապետարանը անցած շաբաթ մեղմացրեց ճնշումը պետական երկամսյա ծախսերի համար հատկացնելով հավելյալ 200 միլիարդ դոլար, սակայն ԱՄՆ Կոնգրեսը այժմ պետք է համաձայնվի մինչև 2013թ. փետրվարը կամ մարտի սկզբերը բարձրացնել պարտքի «առաստաղը»: Վերջին անգամ, երբ Կոնգրեսը փորձեց բարձրացնել պարտքի մակարդակը 2011թ. օգոստոսին, այն հանգեցրեց լարված և դժվարին քաղաքական բանավեճի, ինչպես նաև ԱՄՆ-ի բարձրագույն վարկանիշի կորստին: Այս անգամ վարկանիշային գործակալությունները զգուշացրել էին, որ ԱՄՆ-ն կարող է ենթարկվել վարկանիշի հերթական իջեցմանը, եթե Կոնգրեսը մինչև 2013թ. մարտը չկարողանա ընդունել պարտքի կրճատման երկարաժամկետ կենսունակ նախագիծ:

Բյուջետային անդունդը չեզոքացնող պայմանավորությանը անմիջապես հետևեց Կոնգրեսի որոշումը, որը հաստատեց 9,7 միլիարդ ծավալով ֆինանսական օգնությունը այն մարդկանց, ում տները վնասվե կամ ոչնչացվել էին Սենդի փոթորկի կողմից: Ֆինանսական այս օգնությունը 51 միլիարդ դոլար օգնության փաթեթի առաջին տարրն է, որի նպատակն է օգնել տների սեփականատերերին և տեղեկան կառավարություններին փոթորկից վերականգնվելու համար: Այս զարգացումները օգնեցին, որ ամերիկյան արժեթղթերը անցած շաբաթ ռալի գրանցեն. Standard & Poor’s 500 Index-ը աճեց 4,6 տոկոսով՝ հասնելով 2007թ. դեկտեմբերի իր բարձրագույն կետին: Ուղենիշ հանդիսացող այլ ինդեքսները նույնպես 13 ամիսների ընթացքում իրենց ամենամեծ աճը գրանցեցին: Այդ ընթացքում, անցած շաբաթ եվրոպական և

ասիական շուկաներում ներդրողների անհանգստությունը առաջացրած իր հայտարարությամբ ԱՄՆ-ի Դաշնային Պահուստային Բանկը հայտարարեց, որ այն դիտարկում է, թե արդյոք 2013թ. պետք է շարունակի ամսեկան 85 միլիարդ դոլար ծավալով պարտատոմսերի գնման ծրագիրը:

ԱՄՆ-ի իրական ՀՆԱ-ն (1990-2011)



Անցած շաբաթ լույս տեսած ամերիկյան գործազրկության ամենաթարմ տվյալները հաստատում են, որ միտումը դրական է, սակայն ամերիկյան տնտեսությունը կաճի դանդաղ տեմպերով: Ամսեկան վիճակագրությունը ցույց տվեց 155,000 նոր աշխատատեղեր, սակայն բավական ցածր մակարդակը նշանակում է, որ տնտեսությունը հավանաբար կաճի 2013թ. հավանաբար կաճի ընդամենը 2 տոկոսով, որը բավարար չէ առաջին անգամ 2009թ. սկսված տնտեսական վերականգնումը ամրապնդելու համար: Առկան էին նաև դրական նշաններ, քանզի գործավրկության ընդանուր մակարդակը մնաց լուծելի 7,8 տոկոս, իսկ նոր աշխատատեղեր ստեղվեցին տարբեր բնագավառներում, այդ թվում՝ առողջապահական, արտադրական և սպասարկման հատվածներում՝ խթանելով արդեն իսկ ընդլայնվող տների շուկան և բարձրացնելով սպառողների վստահությունը, որը աճեց մինչև 8 ամիսների բարձրագույն մակարդակը:

ԱՄՆ-ի գործազրկության մակարդակը



Աղբյուր՝ ԱՄՆ աշխատանքային վիճակագրության վարչություն

Սպասարկման հատվածը նույնպես ցուցադրեց վերջին տասը ամիսների ամենաարագ ընթացքը, իսկ արտադրանքի աճին խթանեցին գործարանային պատվերների քանակի ավելացումը և արտահանման բարելավումը՝ այդպիսով ուժեղացնելով ԱՄՆ-ի տնտեսական ավելի ամուր վերականգնման հեռանկարը: Տների շուկան ևս բարելավվեց՝ կայուն աճի համար հանդիսանալով ևս մեկ կարևոր հիմնարար խթան, քանզի առկա տների վաճառքները նոյեմբերին հասան եռամյա մակսիմումներին, իսկ նոր տների վաճառքները անցած ամիս ավելացան 4,4 տոկոսով , որը 2010թ. ապրիլից բարձրագույն մակարդակն է հանդիսանում: Տների կառուցման ծախսերը անցած ամիս մի փոքր աճ գրանցեցին՝ 2012թ. հասնելով 295,3 միլիարդ դոլարի, որը ծախսերի ամենաբարձր մակարդակն է 2008թ. նոյեմբերից:

ԱՄՆ-ի բնակարանային շուկան (‘000)



Աղբյուր՝ ԱՄՆ-ի մարդահամար անցկացնող վարչություն

Ավելի դրական հեռանկար Եվրոպայում

Ի հեճուկս ավելի մեծ վստահության ԱՄՆ-ում՝ այն տեղեկությունները, որ Ամերիկյան Դաշնային Պահուստայի Համակարգը կմեղմացնի պարտատոմսերի ամսեկան գնումները, անցած շաբաթ եվրոպական արժեթղթերի խոշոր անկման պատճառ հանդիսացան՝ ավարտելով 22 ամսյա բարձունքը: Այնուամենայնիվ, եվրոպական տնտեսության ընդանուր հեանկարը անցած ամիս բարելավվեց այն բանից հետո, երբ գերմանական տնտեսությունը կայունացավ և տնտեսական երկու ինդիկատորները և սպառողների բարելավված հարցումները 2013թ. համար մատնանշեցին եվրոզոնայի տնտեսությունների վերադարձը դեպի աճ: Բարելավված այս հեռանկարը դրական նորություն էր ներդրողների համար, հատկապես երբ դրամատիկ անկումից և պարտքային խորացող ճգնաժամից հետո 2012թ. երրորդ քառորդի ընթացքում չորս տարվա մեջ երկրորդ անգամ եվրոզոնան հայտնվեց ճգնաժամի մեջ՝ միաժամանակ տառապելով գրեթե հաստատված 12 տոկոսանոց գործազրկության մակարդակից:

Թեպետ Եվրոպական Կենտրոնական Բանկը անցած շաբաթ զգուշացրեց, որ անհավանական է 2013թ. վերադառնալ տնտեսական աճի անցած մակարդակներին, Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը նշեց, որ թվում է, թե իր տնտեսությունը հաղթահարել է ճգնաժամի վատթարագույն փուլերը: Թեպետ նրա այս հայտարարությունը համընկավ 2013թ. սեպտեմբերին նրա վերընտրման երրորդ ժամկետի հետ, կանցլերի ընդհանուր լավատեսությունը իրատեսական էր, քանզի Եվրոպայի խոշորագույն տնտեսությունը անցյալ ամիս սպասարկման հատվածում ուժեղ աճ էր գրանցել, ինչը վերջին հինգ ամիսների առաջին աճն է և լավագույն արդյունքն է հանդիսանում 2012թ. ապրիլից: Ֆրանսիական տնտեսությունը, սակայն մարտահրավերների առջև է կանգնած, քանզի անկումները արտադրության և սպասարկման հատվածներում շարունակվեցին՝ ամբողջացնելով 10 ամսյա անկումը: Միացյալ Թագավորության սպասարկման հատվածը երկու տարիների ընթացքում գրանցեց առաջին անկումը, թեպետ ՄԹ-ի տնտեսությունը 2012թ. երրորդ քառորդում դուրս եկավ ճգնաժամից:

Ամանորյա իր պաշտոնական ուղերձում, Մերկելը նշեց, որ Գերմանիան սկսում է օգուտ ստանալ անցկացված բարեփոխումներից, և ողջունեց Եվրոպական Կենտրոնական Բանկի (ԵԿԲ) որոշման դրական ազդեցությունը՝ խոշոր ներդրումներ սկսել եվրոզոնայի թույլ տնտեսություններում: Հանդիսանալով Եվրոպայի խոշորագույն տնտեսությունը՝ Գերմանիան միաժամանակ գլխավորում էր Հունաստանի նման Եվրոզոնայի խնդրահարույց պետություններին ֆինանսական օգնության տրամադրման ջանքերը և կրում էր այդ բեռի մեծ մասը՝ հիմնելով Եվրոպայի փրկության մշտական ֆոնդը՝ Եվրոպական Կայունացման Մեխանիզմը: Դրա փոխարեն պարտքերի մեջ խրված եվրոզոնայի պետությունները համաձայնվեցին ընդունել խիստ միջոցներ՝ կրճատելով ծախսերը և ավելացնելով հարկերը:

Եվրոզոնայում բնակվող հասարականձի համար դեկտեմբերին սպառողական գները աճեցին սպասվածից ավելի պայմանավորված մթերքի բարձր գներով, սակայն փոխհատուցվեցին էներգետիկ ծախսերի ավելի ցածր գներով: Ինֆլյացիան եվրոզոնայում ևս մնաց մշտական 2,2 տոկոս, իսկ Եվրոպական Կենտրոնական Բանկի (ԵԿԲ) կանխատեսումները 2013թ. համար իջեցվեցին մինչև 1,6 տոկոս, սակայն կանխատեսվում է, որ տարվա ընթացքում գները կաճեն 1,4 տոկոսով: ԵԿԲ-ն կանխատեսում է նաև տնտեսական ակտիվության հետագա նվազում եվրոզոնայում, ինչը երկու հաջորդական քառորդների համար դարձել է նվազման պատճառ: Ընդհանուր առմամբ, 2013թ. 17 պետություններից բաղկացած եվրոզոնայի հեռանկարը բավականին ամպոտ է: Տնտեսագետներից շատերը կանխատեսում են նվազման

շարունակվող նվազում, քանզի դեֆիցիտի դեմ ուղղված միջոցները, ցածր հարկահավաքությունը և աճող գործազրկությունը մարտահրավեր կդառնան իտալական, իսպանական, հունական և ֆրանսիական կառավարությունների համար բյուջետային թիրախները իրագործելու առումով՝ պատճառ հանդիսանալով նոր շուկայական տատանողականության և խաթարելով ներդրողների վստահությունը: Ֆրանսիայի պարագայում Արժույթի Միջազգային Հիմնադրամը (ԱՄՀ) վերջերս զգուշացրեց, որ ամենայն հավանականությամբ Ֆրանսաիայի կառավարությունը չի կարողանա հասնել իր 2013թ. թիրախին, այն է՝ պահել պարտքը ՀՆԱ-ի 3 տոկոսի չափով՝ իջեցնելով այն 2012թ. 4,5 տոկոսից՝ քանզի 2013թ. տնտեսական աճի մակարդակը կանխատեսվածից ավելի ցածր է:

Հայացք Ասիային

Ճապոնական շուկան անցած շաբաթ Ասիայում շատ սակավ հաղթողների թվում էր, քանզի ճապոնական Nikkei stock index-ը նոր տարվա առաջին առևտրային օրը աճեց 2,8 տոկոսով՝ դառնալով փակման ամենաբարձր դիրքը 22 ամիսների ընթացքում, քանզի ներդրողները ռալլի արեցին ԱՄՆ-ի բյուջետային ճգնաժամի լուծման վերաբերյալ նորությունների հիման վրա: Այնուամենայնիվ, արժեթղթերի շուկաները Հոնկկոնգում, Հարավային Կորեայում և Թայվանում մի փոքր նվազեցին , թեպետ Shanghai Composite Index-ը այս տարվա առևտրային առաջին օրը աճեց ընդամենը 0,4 տոկոսով:

Չինաստանի վերաբերյալ ընդանուր կանխատեսումները բարելավվեցին, քանի որ ըստ կանխատեսումների՝ չորրորդ քառորդում երկրի ՀՆԱ-ն կաճի 7,8-8,0 տոկոսով անցած տարվա համեմատ՝ ավարտին հասցնելով 7 քառորդանի անկումը: Կանխատեսվող բարելավման համար խթան հանդիսացավ արտադրության ընդլայնումը, սակայ 2012թ. դեկտեմբերին սպասարկման հատվածը իրեն ավելի վատ դրսևորեց, քան ակնկալվում էր: Չինաստանի նոր ղեկավարությունը Զի Զինգպինգի գլխավորությամբ որպես թիրախ ընտրել է տնտեսության «կայուն և առողջ զարգացումը» այն բանից հետո, երբ անցած տարի Չինաստանի աճը ամենաթույլն էր 1999թ.-ից: Թիրախային այս ընտրությունը դրդում է Չինաստանի կառավարությանը կրճատել հարկերը փոքր ընկերությունների և տների ցածր եկամուտ ունեցող սեփականատերերի համար, ինչպես նաև ավելացնել ներդրումները և պետական ծախսերը ենթակառուցվածքային ծրագրերի վրա աճը խթանելու և դանդաղող արտահանումները ամրապնդելու նպատակով: Չինաստանի հնգամյա պլանի այլ առաջնահերթություններից են նաև սպասարկման ոլորտի չափորի ընդայնումը, որը ներառում է նաև հեռահաղորդակցություն և փոխադրումներ, որը 2015թ. կկազմի տնտեսության 43-ից 47 տոկոսը:

Չինական տնտեսության մեջ սպառողների ավելի մեծ վստահությունը արտացոլվում էր նաև շքեղության ապրանքների Հոնկկոնգյան վաճառքներում, քանզի այդ ապրանքների վաճառքների ծավալները, ինչպիսիք են օրինակ ոսկյա իրերը և ժամերը, անցյալ տարվա համեմատ 2012թ. նոյեմբերին աճեցին 13,7 տոկոսով՝ ավարտելով 2012թ. հոկտեմբերի 2,9 տոկոսանոց անկումը: Անցյալ տարվա համեմատ 9,5 տոկոսով աճեցին նաև մանրածախ վաճառքները: Անցյալ տարվա ընթացքում չինական սպառողները առաջ անցամ ամերիկյան գնորդներից՝ որպես շքեղության ապրանքների աշխարհի ամենաշատ գնորդներ՝ կազմելով համաշխարհային վաճառքների 25 տոկոսը: Ամերիկյան սպառողները կազմում են շքեղության ապրանքների վաճառքների 20 տոկոսը, որոնց հաջորդում են ճապոնական գնորդները 14 տոկոսով: Ի հավելումն սրան՝ նոյեմբերին մայրցամաքային Չինաստանից Հոկնկոնգ այցելող զբոսաշրջիկների թվի անսպասելի աճ գրանցվեց՝ 3 միլիոնից ավել՝ 30 տոկոսով ավել լինելով 2011թ.-ի ցուցանիշից:

Ապրանքային շուկա՝

Նոր տարվա մեկնարկի հետ միասին ոսկու գները նվազեցին 1,2 տոկոսով, մինչև 1,643,85 ունցիայի դիմաց՝ ցուցադրելով շաբաթական նվազման ամենաերկար շարքը՝ 2004թ. սկսած՝ ի հեճուկս վերջին ինը տասնամյակների ընթացքում տարեկան ամենաերակ աճի շարքին: Ոսկու մեջ ներդրում անողները , ոգևորված 2012թ. 7,1 տոկոս տարեկան աճով, այժմ իրենց ձեռքերում են պահում ոսկու կողմից աջակցություն վայելող ակտիվների և ռեկորդային քանակություն, որոնք գնահատվում են 138,5 միլիարդ դոլար՝ հանդիսանալով մեկ տարվա ոսկու համաշխարհային հանքային արտադրություն: 2012թ. ոսկու մեջ ներդրում կատարողները ձեռք բերեցին 60 տոկոսով ավելի ոսկյա ակտիվներ, քան 2011թ.: Վերլուծաբաններից շատերը կանխատեսում են , որ ոսկու գները 2013թ. կհասնեն մինչև 2000 դոլար՝ հիմնականում ինֆլյացիայի դեմ հեջավորման գործիք և թույլ արժույթների փոխհատուցման միջոց: Միաժամանակ, սակայն, 2013թ. ոսկու ապագա պահանջարկը կարող է դանդաղել, քանզի Հնդկաստանը՝ ոսկու աշխարհի խոշորագույն գնորդը, դիտարկում է ոսկյա իրերի ներմուծումների վրա նոր հարկատեսակի գործարկումը իր ընթացիկ առևտրի դեֆիցիտը նվազեցնելու նպատակով:

Ապրանքային այլ շուկաներում, վերլուծաբանները կանխատեսում են շաքարի կայուն գներ 2013թ.՝ անցյալ տարվա երկրորդ հաջորդական 16 տոկոսանոց անկումից հետո: 2012թ. եգիպտացորենի գները աճեցին 8 տոկոսով, սոյայի գները աճեցին 17 տոկոսով և ցորենի գները աճեցին 19 տոկոսով:

Տեխնոլոգիական արժեթղթեր՝

Որպես տեխնոլոգիական հատվածի հիմնական զարգացում կարելի է առանձնացնել ԱՄՆ-ի Դաշնային առևտրային հանձնաժողովի անցած շաբաթվա հայտարարությունը , որ վերջինս հետևողական չի լինի Google-ի դեմ հակամենաշնորհային գործին՝ փակելով 19 ամիս ձգվող հետաքննությունը, որի նպատակն էր պարզել, թե արդյոք Google –ը ներգրավված է եղել մի գործունեության մեջ , որը «իր որոնման արդյունքում անարդարացիորեն առավելություն է պարգևել իր սեփական ապրանքներին և ծառայություններին մրցակից ընկերությունների դեմ»: Այս որոշումը հիմնականում հաստատեցին Google –ի պաշտպանական դիրքերը, համաձայն որի՝ իր արտադրանքից օգուտ են ստանում բոլոր օգտատերերը, թեպետ ընկերությունը կամավոր կերպով նոր միջոցներ որդեգրեց՝ Google-ում գովազդատուների համար հեշտացնելով նրանց անցումը դեպի նրա մրցակիցները: Google-ը նաև դադարեցրեց որոնման էքսկլուզիվ պայմանավորվածությունները կայքերի հետ և հետ կանգնեց այլ կայքերից իր սեփական որոնման արդյունքերում տվյալներ ներառելու պրակտիկայից:

Google-ը նաև լուծել FTC-ի կողմից դրոշմանիշների լիցենզացորման վերաբերյալ դատարան ուղարկած հայցը այն բանից հետո, երբ ռեգուլյատորները որոշեցին, որ Google «հակաօրինական կերպով կանխում էր մրցակիցներիկողմից որոշակի դրոշմանիշների լիցենզավորումը»: Google-ը այժմ կառավարում է կոպիտ հաշվարկով ԱՄՆ-ի ինտերնետային որոնման համակարգերի շուկայի երկու երրորդը և իր սեփական ապրանքները ներառել է որոնման արդյունքներում՝ ներառյալ Google+ սոցիալական ցանցը, տեղական բիզնես ցուցակները, ինքնաթիռների ժամացուցակը և եղանակային տեսությունները, ինչի արդյունքը եղավ մրցակիցների որոնման ծրագրերի վարկանշային սանդղակի իջեցումը:

Հայաստանյան իրադարձություններ՝

Նոր տարվա սկզբին Հայաստանի տնտեսության հեռանկարը դրական էր և 2012թ. ՀՆԱ-ն աճեց կանխատեսված 7 տոկոսով, ինչը էական բարելավում է հանդիսանում 2011թ. 4,7 տոկոս աճի մակարդակից: 2012թ. նոյեմբերին աշխատողների ամսեկան միջին եկամուտը մի փոքր՝ 0,5 տոկոս աճ գրանցեց՝ մինչև 120,000 դրամ (կամ մոտ $294): Այս թիվը 5,1 տոկոսով ավելի է,քան 2011թ. հոկտեմբերի մակարդակը: Թվերում առկա էր տարածքային անհավասարություն, երբ ամսեկան ամենաբարձր աշխատավարձը գրանցվել է Սյունիքի մարզում՝ 145,700 դրամ ($361), իսկ ամենացածրը՝ Արագածոտնի մարզում 82,000 դրամով ($204): Մայրաքաղաք Երևանում միջին ամսեկան աշխատավարձը 2012թ. նոյեմբերին մի փոքր ավել էր 132,000 դրամից ($327):

Ըստ աշխատատեղերի աշխատավարձերի տարբեր մակարդակների առումով՝ նույն ժամանակահատվածի համար ամենաբարձր աշխատավարձերը գրանցվել են ֆինանսների և ապահովագրության հատվածներում՝ 303,700 դրամ ($752), ինֆորմացիոն և կոմունիկացիոն տեխնոլոգիաների հատվածներում՝ 252,900 դրամ ($626), հանքարդյունաբերական ոլորտում ($601): Սրանց հաջորդում է էներգետիկ հատվածը 154,000 դրամով ($383), շինարարական հատվածը 154,300 դրամով ($382),իսկ պետական աշխատողների և քաղաքացիական ծառայողների ամսեկան եկամուտը կազմում է մոտ 131,000 դրամ ($324): Նվազագույն աշխատավարձերը գրանցվել են սպասարկման ոլորտում՝ ամսեկան մոտ 75,400 դրամ ($187) ուսուցիչների համար, որը միջինացնելով ամսեկան ստացվում է 80,000 դրամ ($198):

Միջազգային պահուստային ֆոնդերում, սակայն, երկրի մակարդակը նվազեց 22 միլիոն դոլարով՝ 2012թ. նոյեմբերին կազմելով մոտ 1,687 միլիարդ դոլար: Պահուստների ցածր մակարդակները մեծապես կապված էին Հայաստանի Կենտրոնական Բանկի կողմից արված ինտերվենցիաների հետ, որոնց նպատակն էր աջակցել հայկական դրամի արժեքը: Անկումը մեծապես սահմանափակվում էր Հայաստանի կանխիկ գումարների պահուստներով,որոնք նոյեմբերին կազմեցին 572 միլիոն դոլար՝ 2012թ. հոկտեմբերին նվազելով 592 միլիոն դոլար մակարդակից: Ընդհանուր առմամբ, Հայաստանի միջազգային ֆոնդերի ամբողջ գումարը 2012թ. սկզբին գերազանցեց 1,8 միլիարդ դոլարը:

-Ռիչարդ Գիրագոսյան

Պրոֆեսիոնալ մոտեցում թրեյդինգին

TeleTRADE-ը FOREX շուկայի հիմնական խաղացողներից է և տիրապետում է աշխարհում ամենալայն ներկայացուցչական ցանցին՝ աշխարհի 20 երկրներում ունենալով 150 գրասենյակներ: Հիմնադրված լինելով 1994թ.՝ TeleTRADE-ը ճանաչված առաջամարտիկ է համարվում խորհրդատվական և միջազգային ֆինանսական շուկաներում ծառայությունների մատուցման բնագավառում